ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ - ՈՒՂԵՑՈՒՅՑ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

ՏՐՎՈՒՄ Է ՏՐՎՈՒՄ Է ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԿԱԼԱՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՀԱՏԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԵՆՔԻ (ՔՐԵԱԿԱՆ ԿԱՐԳԻ 63 և 63-1 ՀՈԴՎԱԾ) ՀԱՄԱՁԱՅՆ

Ստորև բերված տեղեկատվությունը տրվում է ձեզ, ձեր հասկանալի լեզվով: Այս փաստաթուղթը դուք կարող եք պահել ձեր մոտ, ոստիկանությունում կալանավորման ընթացքում:

Դուք տեղեկացված եք, որ գտնվում եք ոստիկանության կալանքում, քանզի ձեր դեմ կա մեկ կամ մի քանի հիմնավոր պատճառ կասկածելու, որ դուք կատարել եք կամ փորձել եք կատարել հանցագործություն, որը պատժվում է ազատազրկությամբ:

Դուք իրավունք ունեք իմանալու ձեր հանցագործության որակավորումը, ամսաթվը և ենթադրյալ հանցագործության կատարման վայրի մասին տեղեկություններ, որի մեջ դուք ներգրավված եք, ինչպես նաև իրավունք ունեք իմանալու տեղեկություններ ոստիկանությունում ձեր բերման ենթարկվելու պատճառների մասին: Ձեր կալանքի առաջին 24 ժամվա ընթացքում, դուք լսումներ կ՛անցկացնեք կատարված դեպքերի մասին:

Այս ժամանակահատվածի ավարտից հետո, եթէ ձեր կրելու վճիռը մեկ տարուց նվազ ազատազրկում է, հանրապետության դատախազը (le procureur de la République) և կամ հետաքննիչ դատավորը (le juge d'instruction) կարող են որոշել ոստիկանությունում ձեր կալանքը ևս 24 ժամով երկարացնելու մասին: Սակայն նախքան որոշում կայացնելը, դատավորը կարող է ձեզանից պահանջել ներկայանալ դատարան:

Ոստիկանական կալանքի ավարտից հետո, հանրապետության դատախազի և կամ հետաքննիչ դատավորի որոշմամբ, կարող եք կամ ներկայանալ դատավորի առաջ և կամ ազատ արձակվել: Համենայնդեպս, առաջինի դեպքում դուք կհայտնվեք դատավորի առաջ ոստիկանական կալանքի առաջին 20 ժամվա ընթացքում:

Բացի այդ ձեզ տեղեկացվում է, թե դուք իրավունք ունեք զգուշացնել որոշ մարդկանց ձեր կալանքի մասին

- Դուք կարող եք խնդրել, որ հեռախոսով տեղեկացնեք մեկ անձի ձեր կալանքի տակ գտնվելու մասին, այսինքն՝ ում հետ, որ դուք սովորաբար ապրում եք, կամ ձեր հարազատ ծնողներից որևէ մեկին և կամ ձեր եղբայրներից, քույրերից մեկի հետ:

- Դուք կարող եք տեղեկացնել նաև ձեր գործատուին:

- Եթե դուք օտարերկրյա քաղաքացություն ունեք, կարող եք նաև տեղեկացնել ձեր երկրի հյուպատոսական մարմիններին: Նրանք, ձեր կողմից օգնության դիմում ստանալուց հետո, բացի հարգելի հանգամանքներից, ամենաուշ, 3 ժամվա ընթացքում կմիջամտեն:

- Եթե դուք իրավական պաշտպանության տակ եք գտնվում, ձեր խնամակալը, ձեր օգնականը կամ ձեր փոխարեն որոշում կայացնող անհատը կտեղեկացվեն ձեր կալանքի տակ գտնվելու մասին:

Այնուամենայնիվ, հանրապետության դատախազը (կամ հետաքննիչ դատավորը) կարող են որոշել, որ այդ հանդիպումները չկայացվեն, եթէ հանգամանքները պարտադրեն, որպիսի գործի հետ կապված տեղեկությունները գաղտնի պահեվեն ու չփոխանցվեն ոչ ոքի՝ ապացույցների հավաքագրման, պահպանման, կամ անհատի կյանքի, ազատության, և կամ անվտանգության նկատառումներով:

Հաղորդակցվել մեկ անձի հետ

Դուք կարող եք հայց ներկայացնել գրավոր կերպով հաղորդակցության ունենալու, կամ հեռախոսով զրուցելու և կամ քաղմասում հանդիպում-զրույց անցկացնելու այն մարդկանցից մեկի հետ, ում տեղեկացրել էիք ձեր կալանավորման մասին: Սակայն, դատական ոստիկանության պաշտոնյան կարող է մերժել ձեր հայցը, եթե այն համատեղելի չե ձեր ոստիկանությունում պահվելու պատճառների կամ այլ հանցագործություն թույլ տալու ռիսկի հետ: Նա կարող է որոշել զրույցի ժամկետը, պայմանները և տևողությունը, որը չի կարող գերազանցել 30 րոպեն. հանդիպումները կ՛անցկացվեն իր, կամ իր կողմից նշանակված անձի վերահսկողության ներքո:

Հետազոտվել բժշկի կողմից

Դուք կարող եք խնդրել որ բժշկը ձեզ հետազոտի: Ոստիկանական կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքում, կարող եք պահանջել կրկին անգամ հետազոտվել բժշկի կողմից:
Եթե դուք իրավական պաշտպանության տակ եք գտնվում, այդ տեպքում, ձեր խնամակալը, ձեր օգնականը կամ ձեր փոխարեն որոշում կայացնող անհատը կարող է պահանջել, որ բժշկական հետազոտություն անցկացնեք:

Հայտարարություններ կատարել, հարցերին պատասխանել կամ լռություն պահպանել

Ոստիկանությունում ձեր ինքնությունը հայտնելուց հետո դուք լսումների ժամանակ. ունեք Հետեվյալ իրավունքները;

- Հայտարարություններով հադես գալ,
- Պատասխանել ձեզ տրված հարցերին,
- Լուռ մնալ:

Փաստաբանի օգնություն

Ոստիկանական կալանքի սկզբից, լսումների ցանկացած պահին ու կալանքի երկարաձգումի հենց առաջին ռոպէից, կարող եք խնդրել փաստաբանի օգնություն և ընտրել այն: Եթե դուք ի վիճակի չեք նշանակել մի փաստաբանի և կամ ձեր ընտրած փաստաբանի հետ կապ հաստատել հնարավոր չէ, այդ դեպքում կարող եք պահանջել, որ ոստիկանատունը ինք փաստաբան նշանակի ձեզ համար:

Փաստաբան կարող է նշանակել, նաև ձեր որոշած անձանցից մեկի կողմից. այս դեպքում դուք պետք է ձեր համաձայնությունը հայտնեք նշանակված փաստաբանին:

Փաստաբանի օգնության և միջամտության ժամկետը

Փաստաբանը կարող է ձեզ հետ զրուցել 30 րոպե: Զրույցի գաղտնիությունը երաշխավորված է: Ոստիկանական կալանքի երկարաձգման դեպքում կարող եք կրկին զրուցել ձեր փաստաբանին հետ:
Եթե խնդրեք Փաստաբանը կարող է ձեզ հետ մասնակցել լսումների, առճակատումների, գործի վերակառուցման և ստուգմների նիստերին:

Եթէ ձեր առաջին լսումը, ինքնության հաստատման չի վերաբերում, այդ չի կարող սկսվել առանց ձեր փաստաբանի ներկայության, փաստաբան պահանջելու հայցը ներկայացնելու առաջին ռոպեից մինչև 2 ժամվա ժամկետի ավարտը:
Այնուամենայնիվ, կարելի է նաև , որ ձեր առաջին նիստը անմիջապես սկսվի, նույնիսկ ձեր փաստաբանի բացակայության՝ հանրապետության դատախազի, կամ հետաքննիչ դատավորի թույլտվությամբ, եթէ այդ անհրաժեշտ համարվի հետաքննության համար :

Եթէ ձեր փաստաբանը ներկայանա լսումներ կամ առերեսում վարելու ընթացքում, հետևաբար, կարող է լսումը ընդհատվել համապատասխան ձեր խնդրանքին, որպեսզի կառողանաք զրուցել փաստափանին հետ:

Այնուամենայնիվ, հանրապետության դատախազը, հետաքննիչ դատավորը, կամ ազատությունների և կալանքի դատավորը կարող են, բացառության կարգով և հիմնավոր պատճառներից ելնելով, որոշում կայացնել հետաձգել ձեր փաստաբանի աջակցությունը նիստերին կամ առերեսումներին՝ առավելագույնը 12 ժամվան համար, որը կարելի է երկարաձգել միայն մեկ անգամ, եթե նախատեսված ազատազրկման ժամկետը առնվազն հինգ տարի է:

Թարգմանիչի օգնություն

Եթե ֆրանսերեն չեք խոսում, կամ չեք հասկանում, նիստերի ընթացքում, ինչպէս նաև փաստաբանի հետ հանդիպումների ընթացքում իրավունք ունեք, անվճար, թարգմանչի օգնությունից օգտվել :

Ներկայացնել դիտարկումներ ոստիկանական կալանքը վերջ դնելու նպատակով

Եթէ հանրապետության դատախազը կամ հետաքննիչ դատավորը որոշում կայացնեն ոստիկանական կալանքը երկարաձգելու մասին, այդ դեպքում, դուք կարող եք դիտարկումներ ներկայացնել ոստիկանական կալանքը վերջ դնելու նպատակով:

Ծանոթանալ ձեր գործերի որոշակի փաստաթղթերի հետ

Ձեր կամ ձեր փաստաբանի խնդրանքով, մինչև ձեր կալանքը երկարաձգելու որոշումը, կարող եք դիմում ներկայացնել ու ծանոթանալու ձեր գործերին;

- Կալանավորման ծանուցագրին,
- Ձեզ ստուգող բժշկի ատեստատին կամ ատեստատներին,
- Ձեր լսումների արձանագրություններին:

Դիտարկումներ ներկայացնել դատախազին

Ոստիկանական կալանքից հետո, եթէ ցանկանում եք, մեկ տարվա ընթացքում, կարող եք ծանոթանալ ձեր գործերի ընթացքին և կամ դիտարկումներ ներկայացնել նամակով՝ ստացման հաստատումով (lettre recommandée avec demande d'avis de réception) հասցեագրված դատախազին և կամ ուղակի դիմում ներկայացնել դատարանի քարտուղարին (greffe), որը դիմումի փոխարեն ձեզ կը հանձնի ստացման փաստաթուղթ: